ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 126Լ

«26» ՄԱՐՏԻ 2024թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 6 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշմամբ հաստատված կարգով

Որոշում եմ՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետերի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 10.01.2018 թվականի հունվարի 10-ի N 6 որոշումը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Ա. Խաչատրյանի վրա:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ.ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
«26» 03 2024թ.
թիվ 126-Ղ որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզի քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների ցանկը և պետերի կազմը

Ծառայության անվանումը	Զբաղեցրած պաշտոնը
Հասարակական կարգի պահպանման	ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության պետ
Ինժեներական և կոմունալ տեխնիկական	Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ (ծածկագիր՝ 99-30.1-Ղ4-1)
Առևտրի և սննդի	Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 99-31.1-Մ2-1)
Նյութատեխնիկական մատակարարման	Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ (ծածկագիր՝ 99-31.2-Ղ5-1)
Տրանսպորտի	Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 99-30.1-Մ2-4)
Բժշկական	Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ (ծածկագիր՝ 99-30.2-Ղ4-1)

Բույսերի և կենդանիների պաշտպանության	Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ (ծածկագիր՝ 99-30.6-Ղ4-1)
Կապի	Մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ (ծածկագիր՝ 99-30.3-Ղ4-1)
Էներգետիկայի	Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ (ծածկագիր՝ 99-30.1-Ղ5-1)